



հաս.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 32 - ձ

« 22 » օգոստոսի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քաղաքացիների ընդունելության աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.08.2019



X *Arutyunyan Arayik*

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված

«Կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

«22» *օգոստոս* 2019թ. N *32* - Լ հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Քաղաքացիների ընդունելությունն անցկացվում է.

1) Նախարարի մոտ՝ ամեն ամսվա վերջին շաբաթվա ընթացքում՝ նախապես համաձայնեցված և հայտարարված օրը և ժամին,

2) փոխնախարարների մոտ՝

ա. կրթության ոլորտը համակարգող՝ ամեն ուրբաթ օր, ժամը 12.00-14.00 և ամեն հինգշաբթի օր, ժամը 9.30-11.30,

բ. մշակույթի ոլորտը համակարգող՝ ամեն ուրբաթ օր, ժամը 16.00-18.00 և 14.00-16.00,

գ. սպորտի և երիտասարդության ոլորտը համակարգող՝ ամեն ուրբաթ օր, ժամը 9.00-11.00.

3) Նախարարության գլխավոր քարտուղարի մոտ՝ ամեն հինգշաբթի օր, ժամը՝ 16.00-18.00 (անհրաժեշտության դեպքում ընդունելությունները կազմակերպվում են փոխհամաձայնեցված ժամկետում),

4) նախարարության վարչությունների և բաժինների պետերի մոտ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9.30-17.45:

2. Նախարարի, փոխնախարարների, գլխավոր քարտուղարի մոտ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում է նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը՝ կատարելով՝

1) քաղաքացիների նախնական գրանցում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով, Mulberry համակարգով ստացված նամակների հիման վրա),

2) ընդունելության օրվա և ժամի վերաբերյալ քաղաքացիներին իրազեկում, ընդունելության կազմակերպում,

3) ընդունելության ժամանակ տրված հանձնարարականների ամրագրում,

4) ընդունելությունների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում:

3. Նախարարի մոտ անցկացվող քաղաքացիների ընդունելությանը մասնակցում են՝ իրավաբանական վարչության պետը, հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետի տեղակալը, նույն վարչության գլխավոր մասնագետը, անհրաժեշտության դեպքում՝ նաև բովանդակային վարչությունների պետերը, կամ այլ աշխատակիցներ: